ՀՏԴ 005.7

Լ.Լ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԼՈԳԻՍՏԻԿԱՆ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Դիտարկվում են լոգիստիկական մեթոդաբանության դրույթները և զարգացման գործոնները: Քննարկվել են լոգիստիկայի հայեցակարգերը և լոգիստիկական մոտեցումների նպատակներն ու խնդիրները: Ուսումնասիրվել է լոգիստիկայի ազդեցությունը կազմակերպության տնտեսական գործառույթների վրա, և ներկայացվել լոգիստիկա հասկացության սահմանումը:

Առանցքային բառեր. լոգիստիկա. զարգացում, գործոն, հայեցակարգ, նպատակ, խնդիր, գործառույթ:

Շուկայական հարաբերությունների ձևավորմանը զուգընթաց հետևողականորեն սկսեց զարգանալ նոր գիտագործնական ուղղություն՝ լոգիստիկան: Նրա նկատմամբ անընդհատ աճող հետաքրքրությունը պայմանավորված է տնտեսության և գործարարության զարգացման պահանջմունքներով: Արտադրության ծավալի աճը, տնտեսական կապերի ընդլայնումն ու բարդացումը, արտադրական պաշարների պահպանման և արտադրանքի տեղափոխման ու բաշխման ծավալների զգալի ավելացումը շարժառիթ հանդիսացան լոգիստիկայի զարգացման համար:

Լոգիստիկական մեթոդաբանությունը թույլ է տալիս լավարկել ապրանքային մատակարարումների ամբողջ շղթան՝ նյութատեխնիկական ապահովումից մինչև պատրաստի արտադրանքի բաշխումը:

Լոգիստիկան կազմակերպության կառավարման համակարգում ներմուծեց նոր մոտեցում՝ կողմնորոշում դեպի սպառողը: Լոգիստիկան պահանջում է, որ նյութերի գնումը, արտադրանքի արտադրությունը և այն սպառողին հասցնելը կատարվի ճիշտ ժամանակին, այսինքն՝ անհրաժեշտ ապրանքները անհրաժեշտ քանակությամբ և անհրաժեշտ պահին լինեն անհրաժեշտ վայրում:

Լոգիստիկական մոտեցումն առանձնանում է նրանով, որ կառավարման օբյեկտ են հանդիսանում նյութական, ֆինանսական, տեղեկատվական հոսքերը՝ որպես միասնական ամբողջություններ և դիտարկվում են մշտական գործընթացի մեջ որոշակի ժամանակային միջակայքում:

Արևմտյան երկրներում կատարված հետազոտությունները վկայում են, որ հումքի առաջնային աղբյուրից մինչև վերջնական սպառողը ապրանքի շարժի ժամանակի 93% ծախսվում է նյութատեխնիկական մատակարարման տարբեր ուղիներով նրա անցման և, հատկապես, պահեստներում պահպանման վրա: Բուն ապրանքի արտադրությանը բաժին է ընկնում ընդհանուր ժամանակի միայն 2%-ը, իսկ տեղափոխմանը՝ 5%-ը [1]: Այդ երկրների տնտեսության մեջ համախառն ներքին

արդյունքի 20% - ը բաժին է ընկնում լոգիստիկական ծախսերին, ընդ որում, վերջնական ապառմանը հասնող արտադրանքի արժեքի մոտ 70%-ը կազմում են նյութական հոսքերի շարժումն ապահովող պահպանման, տեղափոխման, փաթեթավորման, իրացման և այլ գործառնությունների հետ կապված ծախսերը [2]:

Լոգիստիկայի զարգացումը, բացի ապրանքի շարժի հետ կապված ժամանակային և դրամական ծախսերի կրճատման հրամայականից, պայմանավորել են նաև հետևյալ գործոնները.

▪ շուկայական հարաբերությունների համակարգի բարդացումը և արտադրանքի բաշխման գործընթացի որակական բնութագրերին ներկայացվող պահանջների բարձրացումը,

▪ մրցակցության զարգացումը, որը պայմանավորված է վաճառողի շուկայից գնորդի շուկային անցումով,

▪ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը,

▪ ճկուն արտադրական համակարգերի ստեղծումը,

▪ տնտեսական խնդիրների լուծման գործում համակարգերի տեսության և փոխզիջումային մոդելների տարրերի օգտագործումը,

▪ պաշարների անհրաժեշտ մակարդակի որոշման հիմնարար փոփոխությունների փիլիսոփայական ընկալումը (նյութական ռեսուրսների, անավարտ ատադրության և պատրաստի արտադրանքի նվազագույն պաշար կամ ապահովագրական պաշարի վերացում):

Ավանդական փոխակրիչների փոխարեն ավտոմատացված արտադրական գծերի ստեղծումը ձևավորեց նոր, ճկուն արտադրական կառուցվածքներ, որոնք փոքր խնբաքանակերով արտադրանքի արտադրությունը դարձրին շահութաբեր: Դա, միաժամանակ, համապատասխան փոփոխություններ առաջ բերեց պատրաստի արտադրանքի իրացման և արտադրությունը նյութական ռեսուրսներով ապահովման համակարգերում: Այլևս անհրաժեշտություն չկար ունենալու մեծ պահեստներ, փոխարենը առաջացավ սեղմ ժամկետներում բեռները փոքր խմբաքանակներով մատակարարելու անհրաժեշտությունը, ինչն էլ պահանջում էր լոգիստիկական գործունեության արդյունավետ կազմակերպման խնդրի լուծում:

Համակարգերի տեսության մշակումները հնարավորություն տվեցին գիտական տեսանկյունից դիտարկելու ապրանքների շարժը՝ որպես համալիր խնդիր, իսկ լոգիստիկական ցիկլի տարբեր կազմակերպությունները՝ միասնական համակարգ: Դա թույլ էր տալիս հաշվառելու և հնարավորինս համաձայնացնելու լոգիստիկական ցիկլի բոլոր մասնակիցների առանձնահատկությունները, շահերը, ներքին և արտաքին փոխկապվածությունները:

Փոխզիջումների մոդելները հնարավորություն էին տալիս ընտրելու այնպիսի որոշումներ, որոնք կրճատում էին ընդհանուր ծախսերը կամ մեծացնում էին գումա-

րային շահույթը, թեև կազմակերպության առանձին ստորաբաժանումներ կամ ընդհանուր լոգիստիկական շղթայի առանձին մասնակից կազմակերպություններ կրում էին որոշակի կորուստներ:

Պաշարների անհրաժեշտ մակարդակի որոշման հիմնարար փոփոխությունները կապված են լոգիստիկական հիմնական հայեցակարգերի («ճիշտ ժամանակին», «կանբան», «վտիտ արտադրություն») մշակման հետ [3]:

«Ճիշտ ժամանակին» (just-in-time, JIT) հայեցակարգը հիմնված է պաշարների ստեղծման վրա իրականացվող ծախսերի նվազեցման նպատակով անհրաժեշտ քանակով նյութական ռեսուրսների և պատրաստի արտադրանքի մատակարարման համաժամանակեցման վրա: Այս հայեցակարգի նպատակն է այնպես կազմակերպել նյութական հոսքերի շարժը, որպեսզի բոլոր նյութերը, կիսապատրաստուկները և բաղադրատարրերը մատակարարվեն ճիշտ տեղում և ճիշտ ժամանակին՝ արտադրության կամ պատրաստի արտադրանքի հավաքման համար:

«Կանբան» (Kanban) հայեցակարգը ներկայացնում է անընդհատ արտադրական գործընթացի կազմակերպման համակարգ, որն ի վիճակի է արագ վերակառուցման և չի պահանջում ապահովագրական պաշար: Բոլոր արտադրական ստորաբաժանումները մատակարարվում են նյութական ռեսուրսներով միայն այն քանակությամբ և այն ժամանակ, որքան և երբ անհրաժեշտ է պատվերի կատարման համար: Դա նշանակում է, որ արտադրողը չունի ընդհանուր կարծր գրացուցակ և լավարկում է իր աշխատանքը՝ պատվերից կախված:

«Վտիտ արտադրություն» (lean production, LP) հայեցակարգը կատարելագործված «ճիշտ ժամանակին» հայեցակարգն է, ներառում է նաև «կանբան» համակարգի որոշակի տարրեր: «Վտիտ արտադրության» հայեցակարգի անվանումը պայմանավորված է նրանով, որ այն պահանջում է ավելի քիչ ռեսուրսներ, քան զանգվածային արտադրությունը (ավելի քիչ պաշարներ, միավոր արտադրանքի պատրաստման ավելի քիչ ժամանակ, նվազագույն կորուստներ խոտանից և այլն): Ըստ էության, այս հայեցակարգը միավորում է այն առավելությունները, որոնք հատուկ են թե զանգվածային արտադրությանը (արտադրության մեծ ծավալներ, ցածր ինքնարժեք) և թե մանր սերիական արտադրությանը (արտադրանքի բազմազանություն և ճկունություն):

Լոգիստիկական մոտեցման սկզբունքային նորույթը տրանսպորտային, արտադրական և պահեստային օղակների փոխադարձ կապն է, դրանց միավորումը նյութական հոսքերի շարժման միասնական համակարգում [4]: Լոգիստիկայի նորույթը հետևյալն է.

1. կազմակերպությունների տնտեսական գործունեության գերակայությունների փոփոխումը, որով նրանում կենտրոնական տեղը հատկացվում է հոսքային գործընթացների, այլ ոչ թե արտադրության կառավարմանը,

2. վերարտադրության գործընթացում նյութական արժեքների շարժի նկատմամբ համակողմանի համալիր մոտեցումը, որը ենթադրում է նյութական և տեղեկատվական հոսքերի, արտադրության, մենեջմենթի և մարքեթինգի գործընթացների սերտ համագործակցություն և համաձայնություն,

3. կազմակերպությունների տնտեսական գործունեության մեջ փոխզիջումային տեսության օգտագործումը:

Նյութական և տեղեկատվական հոսքերի շարժի ընթացքում հաճախ նկատվում են լոգիստիկական շղթայի մասնակիցների (մատակարարների, սպառողների, միջնորդների) հակադիր նպատակներ: Լոգիստիկան նման դեպքերում կատարում է հարաբերությունների հավասարակշռման, լավարկման և կոորդինացման գործառույթներ: Դա թույլ է տալիս բացառել ապրանքների շարժի տարբեր գործառույթների մեկուսացված կառավարումը և իրականացնել դրանց միավորումը, ինչը հնարավորություն է տալիս՝ ստանալու գործունեության սիներգիական արդյունք, որը գերազանցում է առանձին արդյունքների գումարը:

Լոգիստիկական մոտեցման հիմնական նպատակը նյութական հոսքերի համալիր կառավարումն է: Լոգիստիկայի գլխավոր խնդիրը նյութական և տեղեկատվական հոսքերի կարգավորման և վերահսկողության ամբողջական արդյունավետ համակարգի ստեղծումն է, որը կապահովի ապառողներին բարձր որակի պատրաստի արտադրանքի մատակարարումը, փոփոխվող շուկայական պայմաններին նվազագույն ծախսերով առավելագույն հնարավոր հարմարեցումը, շուկայական մասնաբաժնի պահպանումն ու ավելացումը, մրցակիցների նկատմամբ առավելությունների ձեռքբերումը: Լոգիստիկայի մասնակի խնդիրներից են արտադրական և պահեստային պաշարների լավարկումը, բեռնափոխադրումների և պահպանման ժամանակի կրճատումը, հումքի և նյութերի պահանջարկի որոշումը, մատակարարման ձևի ընտրությունը և այլն:

Ուսումնասիրությունները ցուց են տալիս, որ վերջնական սպառողին հասնող արտադրանքի արժեքի մոտ 60-70% -ը կազմում են ծախսերը լոգիստիկայի վրա (տեղափոխում, պահպանում, պահեստավորում, փաթեթավորում և այլն) [5]: Այս ոլորտում գոյություն ունի էական չիրացված հնարավորություն՝ իջեցնելու արտադրանքի ինքնարժեքը և, հետևաբար, բարձրացնելու նրա մրցունակությունը:

Լոգիստիկական համակարգը, որն օգտագործվում է կազմակերպության կողմից պլանավորման և արտադրական գործունեության ռազմավարությունը մշակելիս, փոխգործակցում է հետևյալ գործառութային ոլորտների հետ.

- արտադրություն և տեխնոլոգիա,
- մարքեթինգ,
- ֆինանսավորում և վարչարարություն:

Պլանավորման գործընթացում լոգիստիկան ազդում է արտադրության և տեխնոլոգիայի վրա կազմակերպության տեղաբաշխման տեղի ընտրության, պահեստների ցանցի ձևավորման, սարքավորման ընտրության, տրանսպորտային միջոցների որոշման ուղղությամբ:

Մարքեթինգի ոլորտում լոգիստիկան սահմանում է բաշխման ուղիները, սպառողների սպասարկման մոտեցումները:

Ֆինանսավորումը և վարչարարությունը կապված են տեղեկատվական համակարգի մշակման, պաշարների և բյուջեի նկատմամբ վերահսկողության հետ:

Լոգիստիկան արտադրության գործընթացում կապված է արտադրական – օրացուցային պլանների կազմման, վաճառքի կանխատեսման, պատվերի մշակման, գործունեության վերահսկողության, պատրաստի արտադրանքի պաշարների, ներքին և արտաքին տրանսպորտի և այլ գործառույթների հետ:

Լոգիստիկայի համակարգի վրա հատուկ ազդեցություն է թողնում մարքեթինգը [6]: Մարքեթինգի պահանջները որոշում են սպասարկման սահմանները, որոնց շրջանակներում գործում է լոգիստիկայի համակարգը: Մարքեթինգի մարտավարությունը անմիջականորեն ազդում է լոգիստիկայի ծախսային ցուցանիշների վրա:

Լոգիստիկան ազդում է նաև կազմակերպության այնպիսի օժանդակ գործառույթների վրա, ինչպիսիք են փաթեթավորումը, դիզայնը և այլն: Եթե նախկինում արտադրանքի դիզայնը կողմնորոշված էր դեպի արտադրության գործող տեխնոլոգիան, իսկ այնուհետև՝ մարքեթինգի պահանջները, ապա ներկայումս այն կոչված է արտադրանքը ձևափոխելու այնպես, որ այն հեշտ լինի փաթեթավորել, պահեստավորել և բեռնել կամ վերափոխել սպառողների պահանջներին համապատասխան:

Ելնելով վերը շարադրվածից, մեր կարծիքով, լոգիստիկայի հասկացությունը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ.

Լոգիստիկան նյութական և նրան հարակից հոսքերի կառավարման գիտություն է՝ հումքի արտադրողից մինչև պատրաստի արտադրանքի վերջնական սպառողը ապրանքների շարժի հետ կապված նվազագույն ծախսերի ապահովման նպատակով: Միաժամանակ այն ապրանքների շարժի գործընթացի բոլոր մասնակիցների շահերի համաձայնեցումն է՝ որպես շուկայական կապերի լավարկման արդյունավետ միջոց, և որի հիմնական նպատակն է համակարգային մոտեցման և փոխզիջումների հիման վրա սիներգիական արդյունքի ստացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Логистика / Под ред. Б.А. Аникина. 3-е изд. - М.: ИНФРА-М, 2004.- 368 с.
2. **Алесинская Т.В.** Основы логистики. Общие вопросы логистического управления. - Таганрог: Изд-во ТРТУ, 2005.- 121 с.

3. **Джамес Р., Доуглас М.** Стратегическое управление логистикой. – М.: ИНФРА - М, 2006.- 830 с.
4. **Сербин В.** Основы логистики: Учебное пособие. – Таганрог: Изд-во ТРТУ, 2004.- 188 с.
5. **Кузьбожев Э.Н., Тиньков С.А.** Логистика. - М.: КНОРУС, 2004.- 224 с.
6. **Голиков Е.** Маркетинг и логистика – новые инструменты хозяйствования. – М.: Экзамен, 2006.- 220 с.

Л.Л. АГАДЖАНЯН

ЛОГИСТИКА КАК НАУЧНО-ПРАКТИЧЕСКОЕ НАПРАВЛЕНИЕ РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ

Рассматриваются факторы развития и положения логистической методологии. Обсуждаются концепции логистики, а также цели и задачи логистических подходов. Изучено влияние логистики на экономические функции организации и представлено определение понятия логистики.

Ключевые слова: логистика, развитие, фактор, концепция, цель, задача, функция.

L.L. AGHAJANYAN

LOGISTICS AS A SCIENTIFIC-PRACTICAL TREND OF ECONOMIC DEVELOPMENT

Options of logistics methodology and development factors are considered. Logistics concepts, as well as goals and tasks of logistic approaches are discussed. The logistics impact on the economic functions of the organization is studied, and the definition of the concept “logistics“ is introduced.

Keywords: logistics, development, factor, concept, goal, task, function.

ՀՏԴ 005.332.4:005.591.6

Ն.Պ. ԱԴՈՆՑ

ԻՆՈՎԱՑԻՈՆ ՈԼՈՐՏԻ ԴԵՐԸ ԵՐԿՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Դիտարկվում են երկրի տնտեսական զարգացման համատեքստում ՀՀ մրցունակության հիմնահարցերը, և հիմնավորվում է այն տեսակետը, ըստ որի ՀՀ մրցունակությունն ապահովվող հիմնական ոլորտը ինովացիաների ոլորտն է:

Առանցքային բառեր. մրցակցային առավելություններ, ապրանքի մրցունակություն, ձեռնարկության մրցունակություն, երկրի մրցունակություն, ինովացիոն ոլորտ, դրական կախվածություն:

Ժամանակակից պայմաններում միջազգային մրցակցությունն ուժեղանում է շուկայի կոնյունկտուրայի վատթարացմամբ՝ հանուն <մեծ պատառի> պայքարից վերածվելով արդեն պայքարի հանուն գոյատևման: